

Կեսարացոյ հետ ունեցած բախումն եւ վերջապէս Սաչատուր Կեսարացոյ նուիրակութեամբ այցելութիւնն ի Լով եւ տիրող գժտութեանց զայրացումը, որուն հետեւութիւնն եղաւ արքեպիսկոպոսին յարումն կաթողիկէ Եկեղեցոյ¹ :

Այս դէպքերուն մօտաւոր ակնհատեսն էր Սիմէոն. անիկա այս միջոցին կը գտնուէր Լովով իբրեւ ուսուցիչ տեղւոյն հայկական դպրոցին : Իր վերոյիշեալ տողերէն արդէն կը տեսնուի, թէ անիկա կաթողիկոսին համակիրներէն չէր : Այն անցուդարձերու հանդէպ, որոնք ամբողջ քաղաքը դրեթէ 10 տարի վրդովեցին, չէր կրնար ինքը անտարբեր մնացած ըլլալ : Իր մէկ Յիշատակարանը էջմիածնի Թ. 100է ձեռագրին մէջ, ցոյց կու տայ թէ բոլոր հոգևով յուզուած էր ինքն ալ. հոն դառնացած սրտով կու տայ 1631—1636 տարիներու անցքերու նկարագրութիւնը : Պէտք է ենթադրել ասկէ, թէ Սիմէոն ուրիշ առթիւ ալ խօսած էր 1626—1631 տարիներու մասին :

Դէպքերուս մանրամասն մէկ նկարագրութիւնը հասած է մեզի չափական մէկ գրութեան մէջ, որուն սկզբնաւորութիւնն եւ վերջաւորութիւնը պակասաւոր է, ուստի եւ հեղինակն ալ անձանօթ : Այս գրուածքը հրա-

¹ Տես խնդրոցս մասին համառօտիւ Հանդ. Ամս. 1934, էջ 4—27 = Հ. Ն. Ա. կի ի նե ա ն, Մովսէս Գ. Տաթևացի, Վիեննա 1936, էջ 248—286 :